43. ՀԱՔԻՄ ԲԵԿ ՈՒ ԴԱՎՐԻՇ ԲԵԿ

Կէղի, չէղի Հաքիմ բեկ կէղի, ուրին մեկ մշակ մի կէղի։ Ինչբար կէրթա ցերեկ վար կէնա, ցանկ կէնա, հար իրիկուն գիգա տուն։ Իրկուն գիգա, Հաքիմ բեկ կեսա.

— Դու իմ տան պես տուն տեսե՞ր իս, իմ պես մարդ տեսե՞ր իս, իմ կնկա պես կնիկ տեսե՞ր իս, իմ դովլաթի պես դովլաթ տեսե՞ր իս։

Մշակ ծեն չէնի էնոր։ Կէրթա արտ ցանք կէնա, իրկուն գիգա տուն, կեսա թը.

— Իմ տան պես տուն տեսե՞ր իս, իմ պես մարդ տեսե՞ր իս, իմ կնկա պես կնիկ տեսե՞ր իս։

Էն լէ կեսա.— Դու ի՞նչ մարդ իս, մարդ օր կա Դավրիշ բեկն է։

Կեսա.— Վոլլա, ես պտի էրթամ ղէնի սպանիմ, ընդրա կնիկ բերիմ ընձիկ։

Գելի գիշերով կէրթա էնտեխ, կէրթա օր ղԴավրիշ բեկ սպանա։ Կմտի Դավրիշ բեկի տուն։ Գիշեր կէղի կափըլթփա, ձեռք կքիսի ընդրա կնիկ։

Կնիկ կբոռա.— Դավրիշ բեկ, հ՚ելի, գող ա մտի մեր տուն։

Գելի կբռնե ղՀաքիմ բեկ, կեսա.— Դու ի՞նչ իս օր էկեր իս օդա։

Կեսա.— Էկեր իմ օր քըզի սպանիմ։ Սպանիմ քըզի, քու կնիկ տանիմ ընձիկ։

Կեսա. —Օր դու էկեր իս ընձի սպանելուն ու իմ կնկան տանելուն, ես քըզի կերնամ սպանիմ ու քըզի փրթիմ, էնիմ թուքուն. հրմալ չսպանիմ զքըզի։ Առ իմ կնիկ, զնա զքըզի։ Ջեսի՞ս թե վախեցավ, կնիկ տվեց ընձիկ. դու օր էնտեխից կաստ էրեր ես, էկեր ես ընձիկ, պտի իմ կնիկ տամ քզիկ։

Գելի կառի ընդրա կնիկ, կէրթա։ Կէրթա, ճամբախ կմտածա, կեսա. «Էդ ի՞նչ լավ մարդ էր օր ընձի չսպանեց ու ուր կնիկ տվեց ընձիկ, շատ բախտով մարդ էր»։

Էդ կնկան կեսա.— Էն Դավրիշ բեկի խաթրու համար դու իմ խոդեկան քուրն էզնիս։

Կնիկ կեսա.— Է՞, ապա ի՞մալ էնինք։

Կեսա.— Դարձի գնա, քու իրկան վրեն։

Կեսա.— Վոլլա ես կէրթամ։

Կեսա.— Ես քրզի կտանիմ։

Էն լէ կեսա.— Դու օր տանիս, քըզի լէ կսպանա, ինձ լէ խէտ, տանիս լէ ֆայդա չէնա, չտանիս լէ ֆայդա չէնա։ Դոր տեսավ՝ զիս լէ կսպանա, քըզի լէ կսպանա, —կեսա,— հ՞ելի էրթանք ընդրա խարզի մոտ, իրեք խարզա ին, իրեք լէ ախպեր. էն մեկ մեռե, մացե էրկուս, էն էրկու ախպեր սրտակոտոր ին, թե ընդոնց խաթր տա, զիս վերցու, էնա ուրին կնիկ։

Գելին կէրթան էդ էրկու ախպոր մոտ։ Հաքիմ բեկ, զէդ կնիկ ու էդ էրկու խարզեն կէրթան Դավրիշ բեկի մոտ։ Հաքիմ բեկ Դավրիշ բեկին կեսա.

— Ես էներ իմ, դու չէնիս. քու կնիկ իմ խոդեկան քուրն ա։

Կեսա.— Ես տվեցի իմ խարզեքներուն խաթըր, օր իմ խարզեք էկան ուրանց թալին իմ օտներուն, թը չէ՝ քըզիկ լէ կսպանինք, կնիկ լէ կսպանինք։

Դավրեշ բեկ կեսա.— Ես ու դուն ախպըրագիր։

Հաքիմ բեկ գելի խաթր կառնի Դավրիշ բեկից ու ընդրա խարզեքներուց ու կէրթա ուր տուն։

Հաքիմ բեկ շատ շատ կդովլաթնա։ Դավրիշ բեկ լէ հրմալ կազքըտնա, ուր ավուր ապավեն կկտրի։ Օր թել մի քաշիս, հարիր քըրչ մոտեն կթափի։ Կանոթնան, շատ կանոթնան։

Դավրիշ բեկ ուր կնկան կեսա.— Կնիկ, ելեք առինք մեր ճժեր, էրթանք Հաքիմ բեկին, սանք մեր էրկու ճժեր չպա՞խա։

Գելին կառին զուրանց էրկու ճժեր ու կէրթան Հաքիմ բեկի գեղ, շատ հեռուն ա։ Գելին կէրթան, շատ ու քիչ աստված կգինա, կէրթան էդ Հաքիմ բեկի տան ռաստ դիգան։ Դավրիշ բեկ ուր կնիկ ու ճժեր կնստցու գեղի եղը ու ինք կէրթա Հաքիմ բեկի տուն, հըլե չգինա, թը Հաքիմ բեկի տուն է։ Խըլխ սալըխ կիտան, թը ըդրա տուն գովլաթավոր ա, աղքատասեր ա, գնա քզի խաց կեր, արի։

Դավրիշ բեկ գելի կէրթա։ Խաց գըլնան, կղբին հ՚առեշ, կուտա։ Հաքիմ բեկ կաչքա, կճանչնա ու զինք ճանաչ չխանա։ Դավրիշ բեկ խաց կուտա ու գողդու փրթուչ փրթուչ կգնա ուր ծոց, հ՚ինքն ուրին կեսա. «Տանիմ իմ ճժերուն»։

Հաքիմ բեկ ուր մշկուն կեսա.— Գնա, էդ մարդուն էսա, մարդավարի թըխ հաց ուտա, հորի՞ խաց կգոզնա, կքոմա կդրա ուր ծոց։

Մշակ կէրթա, կեսա։

Կեսա.— Իմ ճժեր անոթի ին, կտանիմ իմ ճժերուն։

Մշակ կդառնա կէրթա, աղին կեսա.— Կեսա իմ ճժեր անոթի ին, կտանիմ իմ ճժերուն։

Էն լէ կեսա.— Թ՚երթա ուր կնիկ ու ճիժ բերա օդա։

Դավրիշ բեկ գելի կէրթա, կառի զուր կնիկ ու ճիժ ու գիգա հ՚ոդի։ Կես տարի մի կպախա։

Դավրիշ բեկ կեսա ուր կնկան.— Մենք մացինք իդա տեխ, չգացինք Հաքիմ բեկի տուն։

Հաքիմ բեկին մեկուճար լամուկ մի կա, իդա յոթ-ութ տարի բաժնվուկ ա հոր մոտեն։

Հաքիմ բեկի կնիկ կեսա Դավրիշ բեկի կնկան.— Ար էրթանք իմ լամուկ առինք իգանք մեկտեխինք։

Իդա հախս Հաքիմ բեկ ու Դավրիշ բեկ զիրար կխանին ճանանչ։

Գելին Դավրիշ բեկի կնիկ ու Հաքիմ բեկի կնիկ կէրթան, կառին զէդ Հաքիմ բեկի լամուկ, գիգան, գիգան տուն։

Հ՚իրիկուն է, Դավրիշ բեկի կնիկ, Հաքիմ բեկի լամուկ կգրկվին իրար կպառկին։

Դավրիշ բեկ գիշեր գիգա կտեսի օր, մարդ մի ուր կնկա ծոցն է, կեսա. «Էդի իմ կնկա սիրողն է, սիրող է քոներ ուրին». հըմա թուր կթալա ու Հաքիմ բեկի տղի քամակ կկտրա։

Կնիկ գիմնա, կեսա.— Աստված քու տուն ավիրա, էդ ի՞նչ էր

էրեցիր, էդի Հաքիմ բեկի լամուկն էր, բերեր ենք օր մեկտեխենք, բաժնվուկ էր, էդ յոթ տարի։

Կեսա.— Ապա իմա՞լ էնիմ, կնիկ։

Կնիկ կեսա.— Ես ի՞նչ դինամ. լուսուն Հաքիմ բեկ մըզի էրկուսիս լէ կսպանա։

Լուսուն քնուց դելին, Դավրիշ բեկ Հաքիմ բեգին կեսա.— Իդա իմ մեկ տղեն տար մորթա քու տղի տեխ, ես յարնութենով զարկեր իմ քու տղեն սպաներ իմ։

Էն լէ կեսա.— Չէ՛, չսպանիմ։

Դավրիշ բեկ կեսա.— Վոլլա, դու պիտի տանիս իմ լամուկ սպանիս, օր իմ սիրտ խովնա. օր թը դու չտանիս սպանիս, ես իմա՞լ քու տան մեջ օլորտիմ։

Հաքիմ բեկ գելի զԴավրիշ բեկի լամուկ կառի կէրթա, կդնա հ՚օդե մի, հրմալ հ՚օդե մի օր Դավրիշ բեկի աչք հեչ չքիսի, անուշ կերակլով ըդրա լամուկ կպախա։

Դավրիշ բեկ կեսա.— Հաքիմ բեկ, դու իմ լամուկ սպանեցի՞ր։

Կեսա.— Խա։

Կեսա.— Էդմլա, իդա լամուկ լէ սպանիս օր իմ խոքին ուրհաթի օր ես սարֆրաշ (համարձակ) քու տան մեջ օլորտիմ։

Գելի զէդ լամուկ լէ կտանի։ Կտանի, էդ լէ կդնա ուրիշ հ՚օդե մի, կեսա թը՝ «Հ՚ուհու իդա Դավրիշ բեկ աչք չքիսի էդ էրկու լամուկ լէ դինա թը սպանուկ ին»։ Էրկուսին լէ անուշ կերակուլով կպախա։

Դավրիշ բեկ իդա հախս սարֆրաշ կէղի, ուրին ուրին մեջ տան կօլորտի։

Կմնա ժուք ու ժամանակ մի, Դավրիշ բեկ գելի կեսա.

— Հաքիմ բեկ, դե մըզի իղին տուր, մեք էրթանք մեր տեխ։

Հաքիմ բեկ գելի, բազրկան մի եռսուն-քառսուն ծի կդրստա, կբառնա, բոլամա առոն կառոն դոլվաթ կիտա Դավրիշ բեկին, ծեռք մի աղեկ խալավ կխաքու Դավրիշ բեկին, ծեռքմ լէ՝ կնկան։

Հ՚օդեքներուց Դավրիշ բեկի լամկներ կխանա, կբերա, կեսա.

— Դավրիշ բեկ, իդա լէ քու էրկու տղեն ին։

Դավրիշ բեկ կեսա.— Ես տվի քզի օր սպանիր։ Էդ ի՞նչ խաղար աղեկութեն էներ իս ընձիկ, ես ի՞նչ աղեկութեն էնիմ քըզիկ։

Էն լէ կեսա թը.— Էն աղեկութեն, օր թը դուն էնեցիր ընձիկ։

Կեսա.— Էդ ի՞նչ աղեկութեն էր։

Կեսա.— Էն օր դու քու կնիկ տվեցիր ընձիկ։

Կեսա.— Հըպա ես լէ քու լամուկ սպանեցի։

Կեսա.— Էն օր քու կնիկ տվեցիր ընձիկ տաս խատ քընց իմ լամուկ լավ էր ընձիկ։ Օր ես էկա քըզի գողութեն, օր դու զիս չսպանիր ես, էդլա օր լէ չկատարինք։

Դավրիշ բեկ գելի կառնի զուր լամկներ, զուր կնիկ, դովլաթ, կէրթա, շատ մեծապատիվ կէղի ուրին ու կէրթա։

Ուրանք խասան ուրանց մուրազին, դու լէ խասնիս քու մուրազին։

Հ՚երկնուց գիչի իրեք խնձոր, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ լէ անգանջ էրողին։